



Առանց բարոյական՝ ոչ նյութական վնասի հատուցման երաշխավորման՝ մարդու խախտված իրավունքը չի կարող համարվել վերականգնված

Բարոյական վնասի ինստիտուտի իրավիճակն՝ ըստ ՀԲԱ Վանաձորի գրասենյակի վարած գործերի

ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք: Վնասի հատուցման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով»:

ՀՀ-ում ոչ նյութական վնասի հատուցման ինստիտուտի բացակայության պատճառով տարիներ շարունակ **քաղաքացիները զրկված են եղել** իրավունքների և ազատությունների խախտման դեպքերում **ոչ նյութական վնասի հատուցում ստանալու իրավունքից**:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Հայաստանի Հանրապետության դեմ կայացրած վճիռներում անձին պատճառված **բարոյական վնասի դիմաց նյութական փոխհատուցում չտրամադրելը** դիտել է որպես Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի համապատասխան դրույթների **խախտում**: Մասնավորապես՝ «Խաչատրյանը և այլք ընդդեմ Հայաստանի Հանրապետության»¹ և «Պողոսյանն ու Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության»² գործերով, կայացված վճիռներով ներպետական օրենսդրության վկայակոչմամբ, բարոյական վնասի նյութական փոխհատուցում չտրամադրելը ճանաչվել է որպես Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին **եվրոպական կոնվենցիայի խախտում**: Իսկ «Պողոսյանն ու Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության» գործով կայացված վճռում Դատարանն արձանագրել է. «Դատարանը նախկինում վճռել է, որ Կոնվենցիայի ամենահիմնարար դրույթների՝ **2-րդ և 3-րդ հոդվածների խախտման հետևանքով առաջ եկող ոչ նյութական վնասի փոխհատուցումը** սկզբունքորեն պետք է հասանելի լինի հնարավոր պաշտպանության միջոցների շարքում»:

ՀՀ Սահմանադրական դատարանը 2013 թ. նոյեմբերի 5-ի ՍԴԴ 1121 որոշմամբ **ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը** (վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը, չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական

¹ ՄԻԵԴ թիվ 23978/06 որոշում 27.11.2012թ.

² ՄԻԵԴ թիվ 22999/06 որոշում 12.06.2012թ.



պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր) **ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչեց: Ըստ ՄԴ որոշման՝ հողվածը հակասում է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասին, 16-րդ հոդվածի 4-րդ մասին, 18-րդ հոդվածի 1-ին մասին, 19-րդ հոդվածի 1-ին մասին, 43-րդ հոդվածի 2-րդ մասին:**

ՄԴ որոշմամբ հողվածը հակասահմանադրական է համարվել այնքանով, որքանով **բարոյական վնասը չի դիտում որպես վնասի տարատեսակ և չի ապահովում բարոյական վնասի փոխհատուցման հնարավորություն**, որով արգելափակվում է անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքի արդյունավետ իրականացումը, միաժամանակ խոչընդոտում է միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարմանը:

ՄԴ որոշմամբ սահմանված ժամկետում կատարվել է փոփոխություն, որի համաձայն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածը լրացվել է ոչ նյութական վնասի հատուցման դրույթներով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման միայն օրենքով նախատեսված դեպքերում:

5. խոչտանգումից տուժած անձի կրած վնասի փոխհատուցման բովանդակությունը, կարգն ու պայմանները սահմանվում են սույն օրենսգրքով»:

19.05.2014 թվականի ՀՀ քաղաքացիական օրենսգրքում կատարված փոփոխություններով ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը կատարելու նպատակով **ավելացվեցին 162.1 և 1087.2 հոդվածները³, որից առաջինը սահմանում է ոչ նյութական վնասի հասկացությունը և դրա հատուցման պայմանները, մյուսով սահմանվում է հիմնարար իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման կարգն ու պայմանները:**

Այսպես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1-րդ հոդվածի համաձայն՝ «1. սույն օրենսգրքի իմաստով ոչ նյութական վնասը ֆիզիկական կամ հոգեկան տառապանք է, որն առաջացել է անձին ի ծնե կամ օրենքի ուժով պատկանող նյութական կամ ոչ նյութական բարիքների դեմ ոտնձգող կամ նրա անձնական գույքային կամ ոչ գույքային իրավունքները խախտող որոշմամբ, գործողությամբ կամ անգործությամբ:

2. անձը, իսկ նրա մահվան կամ անգործունակության դեպքում նրա ամուսինը, ծնողը, որդեգրողը, երեխան, որդեգրվածը, խնամակալը, հոգաբարձուն իրավունք ունեն դատական կարգով պահանջելու պատճառված ոչ նյութական վնասի հատուցում, եթե քրեական հետապնդման մարմինը կամ դատարանը հաստատել է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով խախտվել են այդ անձի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների

³ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126332>



պաշտպանության մասին» կոնվենցիայով երաշխավորված հետևյալ հիմնարար իրավունքները.

- 1) կյանքի իրավունքը.
- 2) խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքը.
- 3) անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը.
- 4) արդար դատաքննության իրավունքը.
- 5) անձնական և ընտանեկան կյանքը հարգելու, բնակարանի անձեռնմխելիության իրավունքը.
- 6) մտքի, խղճի և կրոնի ազատության, սեփական կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը.
- 7) հավաքների և միավորման ազատության իրավունքը.
- 8) իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը.
- 9) սեփականության իրավունքը:

3. Եթե դատապարտյալն արդարացվել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիային կից Թիվ 7 արձանագրության 3-րդ հոդվածով նախատեսված պայմաններում, ապա նա իրավունք ունի դատական կարգով պահանջելու իրեն պատճառված ոչ նյութական վնասի հատուցում (սույն օրենսգրքի իմաստով՝ հատուցում անարդարացի դատապարտման համար):

.....»:

Ելնելով նշված օրենսդրական փոփոխություններից՝ **ՀՔԱ Վանաձորի գրասենյակը**, որպես ռազմավարական նշանակություն ունեցող խնդիր, **իրականացնում է կազմակերպությունն դիմած քաղաքացիների՝ մարդու իրավունքների և ազատությունների խախտումների դեպքերով ոչ նյութական վնասի հատուցման պահանջով Հայաստանի Հանրապետության դեմ գործերով պաշտպանություն՝** նպատակ ունենալով նպաստելու նշված նորմերի կիրառման ձևավորմանը, խախտված իրավունքի վերականգնմանը՝ ոչ նյութական վնասի ինստիտուտի կիրառման միջոցով, դատական պրակտիկայի ձևավորմանը, օրենսդրական ամբողջականության ապահովմանը, ընթացակարգային հարցերի, այդ թվում՝ ապացուցման բեռի թեթևացմանը, վաղեմության ժամկետների վերացմանը:



ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ոչ նյութական վնասի հատուցման բնագավառում վերը նշված խնդիրներից անդրադարձել է ստորև թվարկվածներին միայն, որոնք արձանագրվել են այս ոլորտում իրավապաշտպան գործունեության արդյունքում.

1. իրավունքի խախտման առկայության փաստի ապացուցման բեռնի ոչ իրավաչափ բաշխումը,
2. վնասի հատուցման պահանջ ներկայացնելու համար մեկ տարի վաղեմության ժամկետի ոչ իրավաչափ լինելը,
3. իրավունքը խախտված անձի կրած «Էական վնասի» եզրույթի բացակայությունը:

1. Իրավունքի խախտման առկայության փաստի ապացուցման բեռնի ոչ իրավաչափ բաշխման խնդիրը

Ոչ նյութական վնասի հատուցման պահանջի գործերով դատարանները գործի քննության ընթացքում օրենսդրի պահանջով դատավարության կողմերի վրա դնում են իր կողմից վկայակոչված փաստերի ապացուցման բեռը: Այն դեպքում, երբ ոչ նյութական վնասի հատուցման պահանջը ներկայացվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.2-րդ 2-րդ կետի պահանջների պահպանմամբ՝ «Անձը, ... իրավունք ունի դատական կարգով պահանջելու պատճառված ոչ նյութական վնասի հատուցում, եթե **քրեական հետապնդման մարմինը կամ դատարանը հաստատել է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով խախտվել են այդ անձի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով երաշխավորված հետևյալ հիմնարար իրավունքները»:**

Այսինքն, եթե արդեն առկա է դատարանի դատավճիռ կամ քրեական հետապնդում իրականացնող մարմնի որոշում, որով հիմնարար իրավունքի խախտման համար որևէ մեկը դատապարտվել է, ոչ նյութական վնասի հատուցում պահանջող անձի վրա դնել **լրացուցիչ պարտավորություն**՝ ապացուցելու համար իր իրավունքի խախտված լինելը, պետության տվյալ խախտման համար սուբյեկտ լինելու փաստը, արդեն իսկ չափից մեծ բեռ է: Օրինակ՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը 15.02.2019 թ թիվ ԵԿԴ/2623/02/17⁴ քաղաքացիական գործով, ըստ հայցի Կարեն Բյուլիեյանի՝ ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության՝ ոչ նյութական վնասի հատուցման պահանջի մասին, կայացրել է հայցադիմումը **մերժելու մասին վճիռ**: Վճռի պատճառաբանությունը եղել է այն, որ տառապանքի առկայությունը կարող է հաստատվել ցանկացած ապացույցով, այդ թվում՝ կողմի, նրա հարազատների ցուցմունքներով: Այլ կերպ ասած՝ հոգեկան տառապանքի

⁴ թիվ ԵԿԴ/2623/02/17 քաղաքացիական գործով վճիռ



առկայությունը հիմնավորելու համար չափից ավելի ձևական պահանջները չեն բխի հոգեկան տառապանքի առանձնահատկություններից: Ուստի՝ ցանկացած ապացույց, որը կարող է վկայել հոգեկան տառապանքի առկայության մասին (օրինակ՝ ձերբակալվածին պահելու պայմանները, տնողությունը, անձի անհատական հատկանիշները՝ դյուրագրգռությունը, ներշնչվողականությունը և այլն), պետք է գնահատվի դատարանի կողմից: Նշված հիմնավորմամբ դատարանը մերժել է ներկայացված հայցադիմումը, այն դեպքում, երբ հայցվորը **որպես վատ վերաբերմունքի արժանանալը հիմնավորող ապացույց** ներկայացրել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 17.03.2016թ. օրինական ուժի մեջ մտած **դատավճիռը, որով Կ. Զյուլիեյանի** նկատմամբ ապօրինի գործողություններ կատարած **անձը դատապարտվել է** ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.2-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ 7. հատուցման չափը չի կարող գերազանցել՝

1) նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկը՝ սույն օրենսգրքի 162.1 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, ինչպես նաև սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավունքների խախտման պարագայում,

2) նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը՝ սույն օրենսգրքի 162.1 հոդվածի 2-րդ մասի 3-9-րդ կետերով նախատեսված իրավունքների խախտման պարագայում:

Կազմակերպությունը, ոչ նյութական վնասի հատուցման գործերով մշակված ռազմավարության համաձայն, հիմնարար իրավունքի խախտման համար հատուցման ենթակա գումարի հաշվարկը կատարում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Հայաստանի և տարածաշրջանի վերաբերյալ նմանատիպ փաստերով կայացված նախադեպային որոշումներով որոշված գումարի չափով:

Անդրադառնալով վնասի չափը որոշելու՝ դատարանների որդեգրած մոտեցմանը՝ պետք է նշել, որ դատական **որևէ ակտում վերլուծություն կամ պատճառաբանություն չկա, թե դատարանը գումարի չափը որոշելիս ինչ հանգամանքներով է առաջնորդվել:** Չնայած նրան, որ գործի դատական քննության ընթացքում պահանջվող գումարի չափի վերաբերյալ բազմաթիվ հարցադրումներ են լինում, ընդհուպ մինչև **ապացուցման բեռ է դրվում հայցվորի վրա:**

Վերևում վկայակոչված Կ. Զյուլիեյանի գործով հայցվորը առաջին ատյանի դատարանի վճռի դեմ ներկայացրել է վերաքննիչ բողոք: **Վերաքննիչ դատարանը** բավարարել է բողոքը՝ նշելով, որ «...սույն գործով ոչ նյութական վնասի առկայության հարցին անդրադառնալիս **Դատարանն անտեսել է**, որ հոգեկան տառապանքի հետևանքով ոչ նյութական վնասն ունի որոշ առանձնահատկություններ, այն է՝ գործում է այն կանխավարկածը, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի խախտմամբ ձերբակալումն **անձին պատճառում է որոշ հոգեբանական տառապանքներ ոչ միայն ձերբակալման ընթացքում, այլ նաև դրանից հետո:** Ոչ նյութական վնասի հատուցման հիմք հանդիսացող տառապանքի, մասնավորապես՝ հոգեկան տառապանքի



հաստատման համար պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ նման տառապանքը հաստատելու համար ուղղակի ապացույցներ կարող են և չներկայացվել: Տառապանքի առկայությունը կարող է հաստատվել ցանկացած ապացույցով, այդ թվում՝ կողմի, նրա հարազատների ցուցմունքներով: Այլ կերպ ասած՝ հոգեկան տառապանքի առկայությունը հիմնավորելու համար չափից ավելի ֆորմալ պահանջները չեն բխի հոգեկան տառապանքի առանձնահատկություններից: Ուստի՝ **ցանկացած ապացույց, որը կարող է վկայել հոգեկան տառապանքի առկայության մասին, պետք է գնահատվի դատարանի կողմից**»:

Ապացույցի ու տառապանքի առկայությունը վերաբնիչ դատարանի արձանագրելուց հետո ստորադաս դատարանը հայցը բավարարվել է մասնակի. ՀՀ-ից, ի դեմ ՀՀ ֆինանսների նախարարության, բռնագանձել 500.000 ՀՀ դրամ: Այնուամենայնիվ արձանագրենք, որ դատարանը նշել է, թե մինչև այն է՝ հայցվորի վկայակոչած փաստերի առկայությունը չեն ապացուցում հոգեկան տառապանքի արդյունքում առաջացած ծանր հետևանքների հանգամանքը: Սակայն որոշել է կրած **վնասի չափ** սահմանել 500.000 ՀՀ դրամ գումար, որը, սակայն, կրկին **որևէ հիմնավորում չունի**: Դատարանների՝ պատճառված վնասի չափ որոշելու մոտեցումը կախված չէ նույնիսկ խախտման տևողությունից:

Մեկ այլ գործով՝ «Հովհաննես Ղազարյանն ընդդեմ ՀՀ-ի՝ ի դեմ ՀՀ ֆինանսների նախարարության» **դատարանը հիմնավոր է համարել Հայցվորի իրավունքի խախտման փաստը և հատուցման ենթակա գումարի չափ է սահմանել 2.000.000 ՀՀ դրամ**: Դատարանը գործի քննության արդյունքում եզրահանգել է՝ «Սույն գործի փաստերի համաձայն՝ դատարանը գործ ունի պետության կողմից առանց մեղքի պատասխանատվության հետ, այսինքն՝ անկախ այն հանգամանքից՝ հայցվորի ձեռքակալությունն ու կալանքը եղել են հիմնավորված, թե՛ ոչ, հայցվորն իրավասու է պահանջելու քրեական հետապնդման ընթացքում կրած վնասները»: Այսինքն՝ դատարանը չի ընդունում պատասխանողի այն պնդումը, որ պետք է առկա լինեն քննությունն իրականացնող մարմինների կամ պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունները: Հայցվորը, որպես վնասի փոխհատուցում, պահանջում է նախնական կալանքի վայրում պահման անմարդկային պայմանների և հետապնդման ամբողջ ժամանակահատվածի համար օրական հաշվարկված գումար: Պահման վայրի պայմանների մասով դատարանը գտնում է, որ նշված փաստը հաստատվում է քրեակատարողական հիմնարկության ղեկավարի գրությամբ՝ պահման վայրի պայմանների վերաբերյալ, որը անմարդկային վերաբերմունք է: Քրեական հետապնդմամբ պատճառված ոչ նյութական վնասի մասով դատարանը գտնում է, որ թեև այդպիսի վնաս կարող է պատճառվել ոչ միայն ազատությունից զրկելու հետևանքով, այլ նաև՝ քրեական հետապնդման հիմքով, սակայն քրեական հետապնդման մասով, ի տարբերություն ազատությունից զրկելուն, պետք է ներկայացվեն համապատասխան հիմնավորումներ: Այսինքն՝ հայցվորը պետք է ներկայացներ քրեական հետապնդման հետևանքով կրած վնասների վերաբերյալ հիմնավորումներ և ապացույցներ: Ինչ վերաբերում է ազատությունից զրկելու հետևանքով կրած վնասին, դատարանը գտնում է, որ հայցվորի՝ որպես վկայի տրված ցուցմունքը, ինչպես նաև պահման վայրի պայմանները բավարար են եզրահանգելու, որ հայցվորը կրել է բարոյական վնաս, հետևաբար՝ բարոյական վնասի չափը պետք է գնահատել ոչ թե քրեական հետապնդման տևողությամբ, այլ նախնական կալանքի տևողությամբ:



Անդրադառնալով բարոյական վնասի չափին՝ դատարանը գտնում է, որ հայցվորի նշած երկու հիմքերի առկայությունը և գործի փաստերը հաշվի առնելով՝ բարոյական վնասի չափ պետք է սահմանել **2 միլիոն ՀՀ դրամ**:

Մեկ օր անազատության մեջ պահելու և մինչև 10 օր ապօրինի քրեական հետապնդման ենթարկվելու արդյունքում կրած վնասի չափ **2 տարբեր դատարաններ սահմանել են 250.000 ՀՀ դրամ**: Այս դեպքերում ևս պահանջվող գումարի հաշվարկի մեխանիզմը մեկն է, եվրոպական դատարանի նախադեպային որոշումներով սահմանված գումարի չափը⁵:

Պետք է նշել, սակայն, որ դատարաններն իրենց վճիռներում հաշվարկի ելակետ չեն սահմանում բարձր դատարանի որոշումներով սահմանված վնասի չափը, այլ լռելյայն հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.2-րդ հոդվածով սահմանված փոխհատուցման ենթակա գումարի ամենաբարձր շեմը՝ դրա շրջանակներում հատուցման ենթակա գումարի չափ են որոշում՝ առանց մանրամասնելու:

Հոգեբանական տառապանքի առկայությունը ապացուցված է համարվում դատարանում իր ապրումների ու տառապանքների մասին՝ հայցվորի տված ցուցմունքով: Այս ոլորտում Կազմակերպության ունեցած փորձի հիման վրա պետք է փաստենք, որ դեռևս որևէ այլ ապացույց դատարանները չեն պահանջվել:

Վերջին 3 տարիների ընթացքում քննված գործերի հիման վրա կարող ենք փաստել, որ **ոչ նյութական վնասի հատուցման գործերի քննության պրակտիկան ՀՀ-ում սկսել է ձևավորվել**, ինչն իրավունքի զարգացման և պաշտպանության տեսանկյունից կարևորագույն հանգամանք է: Ժամանակի ընթացքում ի հայտ եկած խնդիրների լուծման ուղղությամբ ներկայացվող առաջարկությունների հիման վրա կունենանք էլ ավելի կայուն ու զարգացած ինստիտուտ, քան այս պահին գործողն է, քանի որ մի քանի տարի առաջ վնասի հատուցման ինստիտուտը ընդհանրապես բացակայում էր, իսկ այսօր արդեն այն կա ու գտնվում է շարունակական զարգացման փուլում:

Իրավունքի պաշտպանված լինելու, անպատժելիության մթնոլորտը վերացնելու, պետության գործակալների, պետության անմիջական վերահսկողության ներքո գտնվող անձանց իրավունքների խախտման դեպքում պետության կողմից փոխհատուցում ստանալու և իրավունքի իրացման տեսանկյունից **պետք է օրենսդրությունը մատչելի լինի**, դատարան ներկայացված հայցադիմումները պետք է քննվեն ապացուցման տեսանկյունից այլ ընթացակարգով, քան նախատեսված է ՀՀ քաղաքացիական դատավարության գործող օրենսգրքով, քանի որ արդեն օրենսդիրը սահմանում է. «Անձը իրավունք ունի դիմելու բարոյական վնասի հատուցման համար, եթե քրեական հետապնդման մարմինը կամ դատարանը հաստատել է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով խախտվել են այդ անձի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների

⁵ Գալստյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ՝ 26986/03, 15.11.2007 թ.), Մկրտչյան ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ՝ 6562/03, 11.01.2007 թ.)

պաշտպանության մասին» կոնվենցիայով երաշխավորված հետևյալ հիմնարար իրավունքները»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր վճիռներում⁶ բազմիցս արձանագրել է, որ պետությունը պետք է զերծ մնա կոնվենցիայով երաշխավորված իրավունքները ուղղակիորեն խախտելուց, իսկ եթե այնուամենայնիվ խախտում է տեղի ունեցել, ապա պետք է գործուն քայլեր ձեռնարկի մանրակրկիտ քննություն իրականացնելու, մեղավորներին բացահայտելու, համարժեք պատիժ նշանակելու և փոխհատուցում տրամադրելու ուղղությամբ: **Ստանձնած պարտավորություններից որևէ մեկի չկատարելը հանգեցնում է իրավունքի խախտման:** Պետությունը, ի թիվս իր ստանձնած մյուս պարտավորությունների՝ քրեական արդարադատություն իրականացնել, պատիժ նշանակել, պետք է իր իրավասության ներքո գտնվող անձանց կողմից իրավունքի խախտման դեպքերում տրամադրի համապատասխան փոխհատուցում այն անձանց, ում իրավունքը խախտվել է: Սա կարևորագույն պայման է իրավունքի պաշտպանված լինելու համար: **Քանի դեռ լիարժեք չի գործում ոչ նյութական վնասի հատուցման ինստիտուտը, չենք կարող ասել, որ խախտված իրավունքները լիարժեք վերականգնվում են:**

2. Վնասի հատուցման պահանջ ներկայացնելու համար մեկ տարի վաղեմության ժամկետի ոչ իրավաչափ լինելը

2. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.2-րդ հոդվածի 9-րդ մասի հակասությունը ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված նորմերին

Վաղեմության մասին խոսելիս կարևորագույն հարցը, որ պետք է քննարկել, այն է, թե արդյոք վաղեմություն սահմանելու մասին հոդվածն իր կարգավորումներով հանդերձ **հակասում է ՀՀ Սահմանադրության և նույն օրենքի համապատասխան հոդվածներին, թե՛ ոչ:**

Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է:

2. մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:

3. հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

⁶ Փոուելն ընդդեմ Մեծ Բրիտանիայի [Powell c. Royaume-Uni] որոշում,



ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածով երաշխավորվում է յուրաքանչյուրի՝ խոշտանգումներից, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ մնալու բացարձակ իրավունքը:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի համաձայն՝ **«1. յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:**

2. յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, ունի իր իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ **«Հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր»:**

ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք: Վնասի հատուցման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով»:

Վիճահարույց ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.2-րդ հոդվածի 9-րդ մասը սահմանում է՝ «Ոչ նյութական վնասի հատուցման պահանջը դատարան կարող է ներկայացվել ինչպես սույն օրենսգրքի 162.1 հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավունքի խախտումը հաստատելու պահանջի հետ՝ խախտման մասին անձին հայտնի դառնալու պահից, այնպես էլ այդ իրավունքի խախտումը հաստատող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո կամ ոչ արդարացնող հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին քննիչի կամ դատախազի կայացրած՝ չվերացված կամ չբողոքարկված որոշման մասին այդ անձին հայտնի դառնալու պահից **մեկ տարվա ընթացքում**»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածը սահմանում է, որ «Հայցային վաղեմությունը չի տարածվում՝

- 1) **անձնական ոչ գույքային իրավունքների և այլ ոչ նյութական բարիքների պաշտպանությանն ուղղված պահանջների վրա**, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի (...):»:

Ոչ նյութական բարիք հասկացության բովանդակությունը բացահայտվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ «Անձի կյանքը և առողջությունը, **արժանապատվությունը**, անձնական անձեռնմխելիությունը, պատիվը



ու բարի անունը, գործարար համբավը, մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը, անձնական ու ընտանեկան կյանքի գաղտնիությունը, ազատ տեղաշարժվելու, բնակվելու և գտնվելու վայր ընտրելու իրավունքը, անվան իրավունքը, հեղինակության իրավունքն ու **քաղաքացուն ի ծնե կամ օրենքի ուժով պատկանող այլ անձնական ոչ գույքային իրավունքները և ոչ նյութական բարիքներն** անօտարելի են ու անփոխանցելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Անձը, իսկ նրա մահվան կամ անգործունակության դեպքում նրա ամուսինը, ծնողը, որդեգրողը, երեխան, որդեգրվածը, խնամակալը, հոգաբարձուն իրավունք ունեն դատական կարգով պահանջելու պատճառված ոչ նյութական վնասի հատուցում, եթե քրեական հետապնդման մարմինը կամ դատարանը հաստատել է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով խախտվել են այդ անձի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով երաշխավորված հետևյալ հիմնարար իրավունքները.

(...)

2) խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքը (...)»

Վկայակոչված հոդվածների համալիր վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ անձի՝ խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու բացարձակ իրավունքը օրենսգրքի իմաստով համարվում է անձի անձնական ոչ գույքային իրավունք, ոչ նյութական բարիք, որի պաշտպանության համար օրենսդրությամբ չի նախատեսվում հայցային վաղեմություն:

Մինչդեռ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.2-րդ հոդվածի 9-րդ մասը, որը սահմանում է անձի անձնական, ոչ գույքային իրավունքների խախտման արդյունքում պատճառված ոչ նյութական վնասի հատուցման կարգը, սահմանում է **հայցային վաղեմության մեկ տարվա ժամկետ, որի հետևանքով ակնհայտորեն ի հայտ է գալիս օրենսդրության տարբեր հոդվածների միջև հակասություն:**

Անդրադառնալով իրավական նորմերի միջև ծագած հակասություններին՝ հարկ է նշել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածը, ըստ որի՝ «Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից»:

Ստեղծված իրավիճակում հարկ է անդրադառնալ ոչ նյութական վնասի հատուցման ինստիտուտ նախատեսելիս օրենսդրի հետապնդած նպատակին:



Այսպես՝ ՀՀ քաղաքացիական օրենսդրության մեջ ոչ նյութական վնասի հատուցման ինստիտուտ հասկացությունը ներդրվեց այն պահից սկսած, երբ ՀՀ-ի դեմ Եվրոպական դատարան բերված գործերով ՄԻԵԴ-ը ներպետական օրենսդրությամբ բարոյական վնասի նյութական փոխհատուցում չտրամադրելը ճանաչեց Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի խախտում: Նման եզրակացության եկավ նաև ՀՀ Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1121 որոշմամբ, որի արդյունքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 2014 թվականի մայիսի 19-ին ընդունված և 2014 թվականի նոյեմբերի 1-ին ուժի մեջ մտած թիվ 30-21-Ն օրենքով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի մեջ կատարվեցին համապատասխան փոփոխություններ և լրացումներ՝ **Նախատեսելով նաև ոչ նյութական վնասը, վնասի հատուցման կարգը և պայմաները:**

Ակնհայտ է դառնում, որ **օրենսդրի հիմնական նպատակը եղել է** օրենսդրական համապատասխան կարգավորումներով այնպիսի իրավական մեխանիզմներ սահմանելը, որոնք կերաշխավորեն անձի հիմնարար իրավունքների արդյունավետ պաշտպանությունը: Օրենսդրի նպատակն ի սկզբանե եղել է անձի արժանապատվության, հիմնարար իրավունքների և ազատությունների՝ որպես բարձրագույն արժեքների լիարժեք իրացումը: **Հետևաբար՝ այս իմաստով ցանկացած ժամկետային սահմանափակում համարվում է անձի հիմնարար իրավունքների իրացման ակնհայտ խոչընդոտ:** Դա դուրս է օրենսդրության հիմնական նպատակներից և սկզբունքներից, ինչին հետամուտ է եղել օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի դրույթների սահմանմամբ:

Ամբողջ վերոգրյալից բխում է, որ **ստեղծված իրավիճակում բացառապես կիրառման ենթակա է այն նորմը**, որն անմիջականորեն բխում է օրենսդրության նպատակներից և սկզբունքներից, որին համարժեք է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածը, որը անձնական ոչ գույքային իրավունքների և այլ ոչ նյութական բարիքների պաշտպանությանն ուղղված պահանջների վրա չի նախատեսում կիրառել հայցային վաղեմություն:

Ոչ նյութական վնասի հատուցման մասին խոսելիս գործ ունենք հիմնարար իրավունքների պաշտպանության հետ, որը, համաձայն ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածի, այն ելակետային նորմն է, որով պետք է ղեկավարվի օրենսդիրն այդ իրավունքների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանելիս: Տվյալ դեպքում հիմնարար իրավունքների պաշտպանությանն ուղղված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նորմերն ըստ էության չեն նախատեսում բավարար և արդյունավետ իրավական մեխանիզմներ՝ այդ իրավունքների արդյունավետ իրացման համար: Այսինքն՝ առկա են դրա վերաբերյալ իրավական դրույթներ, սակայն դրանց միջև առկա ներքին հակասությունները թույլ չեն տալիս լիարժեք պատկերացում կազմելու, թե Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարան դիմելու իրավունքը պետք է իրացնել հիմնարար իրավունքի խախտման պահից մեկ տարվա ժամկետում, թե՛ ցանկացած պահի՝ առանց կոնկրետ ժամկետների սահմանափակման, ինչպես նախատեսված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածով:



Այս մասով ակնհայտ է դառնում, որ **օրենսդրության մեջ առկա ձևակերպումները պետք է լինեն հստակ, այսինքն՝ այնպիսին, որ իրավակիրառողը նորմի ձևակերպումից հստակ իմանա՝ երբ, ինչ ժամկետներում և ինչ կարգով պետք է իրականացնի իր իրավունքների պաշտպանությունը:** Հակառակ դեպքում ստացվում է, որ նորմը կարող է մեկնաբանվել տարբեր կերպ՝ ըստ իրավակիրառողի հայեցողության, որն ինքնին հակասում է իրավական որոշակիության սկզբունքին:

3. Իրավունքը խախտված անձի կրած «Էական վնասի» հասկացության բացակայությունը

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.2 հոդվածի հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ ոչ նյութական վնասի հատուցման չափը որոշելիս դատարանը հաշվի է առնում ֆիզիկական կամ հոգեկան տառապանքի բնույթը, աստիճանը և տևողությունը, պատճառած վնասի հետևանքները, վնասը պատճառելիս մեղքի առկայությունը, ոչ նյութական վնաս կրած անձի անհատական հատկանիշները, ինչպես նաև այլ վերաբերելի հանգամանքներ:

7. հատուցման չափը չի կարող գերազանցել՝

1) նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկը՝ սույն օրենսգրքի 162.1 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, ինչպես նաև նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավունքների խախտման պարագայում,

2) նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը՝ սույն օրենսգրքի 162.1 հոդվածի 2-րդ մասի 3-9-րդ կետերով նախատեսված իրավունքների խախտման պարագայում:

8. ոչ նյութական վնասի հատուցման չափը բացառիկ դեպքերում կարող է գերազանցել սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված առավելագույն սահմանը, եթե պատճառված վնասի արդյունքում առաջացել են ծանր հետևանքներ:

Վկայակոչված նորմը սահմանում է, թե որ իրավունքի խախտման դիմաց ինչ չափի փոխհատուցում կարող է պահանջել անձը, որի իրավունքը խախտվել է:

Այս մոտեցումը տրամաբանական չէ այն դեպքում, երբ **չկա մի այնպիսի մարմին**, որը իրավասու կլինի չափելու անձի կրած տառապանքի բնույթը, տևողությունը և, որ ամենակարևորն է, գնահատել տվյալ խախտման գումարային արժեքը: **Հոգեբանական տառապանքի բնույթն ու արտահայտման ձևերը խիստ անհատական են, ինչն էլ ենթադրում է, որ հատուցման չափն էլ պետք է անհատական լինի:**

Մեկ այլ կետով օրենքը սահմանում է, որ բացառիկ դեպքերում պահանջվող հատուցման չափը կարող է գերազանցել սահմանված առավելագույն չափը, եթե պատճառված վնասի արդյունքում առաջացել են ծանր հետևանքներ: Սա այն դեպքում, երբ օրենսդիրը չի մանրամասնում, թե որն է ծանր հետևանքը և ինչպես է այն վրա հասնում, ինչ տեսակի հետևանքը կարող է համարվել ծանր: **Բացակայում է «ծանր հետևանք» եզրույթի մեկնաբանությունը, որն առաջացնում է իրավական որոշակիության**



խնդիր: Այսինքն՝ «Ծանր հետևանք» եզրույթի գնահատումը այս պարագայում թողնված է դատարանի հայեցողությանը, ինչը չի կարող հանգեցնել օբյեկտիվ գնահատման, քանի որ **«Ծանր հետևանք» հասկացությունը անհատական է և կապ ունի ներքին ընկալման հետ:**

ՀԲԱ Վանաձորի գրասենյակը պատճառված վնասի հատուցման գործերով պաշտպանություն է իրականացնում նաև վարչական դատարաններում:

Արձանագրում ենք, որ թեև ՀՀ-ը ոչ նյութական վնասի հատուցման ինստիտուտ է նախատեսել՝ իրավական ակտերում փոփոխություններ կատարելով, սակայն այս պահին դեռևս դրանում եղած խնդիրները եւ հարցերը չեն հանգեցնում բուն նպատակի իրականացմանը՝ խախտված իրավունքի վերականգնմանը, քանի որ ինստիտուտը դեռևս պրակտիկայի հաշվին **գարգանալու և կատարելագործվելու կարիք ունի:**

Խախտված իրավունքների վերականգման համար անհրաժեշտ է նախ պրակտիկայի շուրջ ի հայտ եկած խնդիրների լուծմամբ կատարելագործել այս ինստիտուտը, մասնավորապես՝ **քաղաքացիական գործեր քննող դատավորներին վերապատրաստել բարոյական վնասի հատուցման գործերի քննության առանձնահատկություններից ելնելով, նվազեցնել հայցվորի վրա դրվող ապացուցման պարտականությունը, փոխհատուցման ենթակա գումարի հաշվարկի հստակ մեխանիզմների ներդնել, «ծանր հետևանք» եզրույթի հստակ սահմանում տալ, վերացնել վաղեմության ժամկետները:**